

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Փորձագետ ներգրավելու անհրաժեշտությունը պայմանավորված է Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) գնումների կազմակերպման բաժնի կանոնադրական խնդիրներից բխող, մասնավորապես գնումների կազմակերպման որակի բարձրացմանը միտված ռազմավարության ու ծրագրերի մշակման և բաժնի գործող անձնակազմով դրանք իրականացնելու անհնարինությամբ:

2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Փորձագիտական աշխատանքի նպատակը Կադաստրի կոմիտեի գնումների կազմակերպման բաժնի կանոնադրությունից բխող գործառնությունների իրականացման ապահովումն է:

Փորձագետը պարտավոր է ապահովել՝

- ԵԱՏՄ պայմանագրով ստանձնված պարտավորությունների շրջանակում պահանջվող փաստաթղթերի կազմումը ռուտերեն լեզվով
- Կոմիտեի գործառնությունների իրականացման համար գնման գործընթացների կազմակերպումը
- հրավերի պատրաստում հայերեն և ռուսերեն լեզուներով (ներառյալ տեխնիկական բնութագրերը)
- ընթացիկ տարվա ընթացքում կազմել հաջորդ տարվա գնումների պլանը
- կազմել գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի, գնումների համակարգող ձևավորելու մասին հրամանի նախագիծը
- կազմել գնման ընթացակարգերի գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները
- իրականացնել գնահատող հանձնաժողովի քարտուղարի լիազորությունները
- որպես գնումները համակարգող գնահատել գնման հայտի կազմման համապատասխանությունը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Պայմանագիրը կնքելու պահից սկսած 1 (մեկ) տարի ժամկետով:

4. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

1) Փորձագետը 1 (մեկ) տարվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

- փորձագետի կողմից կատարված աշխատանքների արդյունքում առաջադրված խնդիրները պետք է ստանան ամբողջական լուծում

- ակնկալվում է Կոմիտեի աշխատանքային ընթացակարգերի իրականացման նորարարական լուծումներ:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է բավարար, լավ կամ գերազանց:

5. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ

Փորձագետի կողմից ներկայացվող հաշվետվությունները նախատեսվում է ներկայացնել կիսամյակային կտրվածքով, մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսվա 5-ը:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Աշխատանքների գնահատման չափանիշներն են՝

1) գնման ընթացակարգերի վարման ճշտություն

2) գնման ընթացակարգի օրենքով նախատեսված ժամկետների պահպանում:

7. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՓՈՐՉԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

- ՀՀ քաղաքացիություն,
- բարձրագույն կրթություն,
- ռուսերեն լեզվի գերազանց տիրապետում,
- թիմային աշխատանքի ունակություն,
- հաշվետվությունների, փաստաթղթերի կազմման և ներկայացման ունակություն,
- տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն,

- ժամանակի կառավարում,
- «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության իմացություն
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրվող գնումների որակավորված մասնագետ լինելու հավաստում

8. ՓՈՐՁԱԳԵՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՄԻՏԵՈՒՄ

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի շրջանակներում հրավերների կազմում և գնման ընթացակարգերի հայտարարում,
2. գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի թարգմանություն ուսերեն լեզվով և հրապարակում,
3. պատասխանատու ստորաբաժանումների կողմից կազմված գնման հայտերի ուսումնասիրություն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով,
4. իր կողմից գնման ընթացակարգերի արձանագրությունների կազմում և հրապարակում: